

ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ԳՈՅՆԵՐԸ

Թէև կ'ըսեն թէ բարկութիւնը գէշ խորհրդատու մըն է, սակայն չափազանց հայրենասէր ալ է, որովհետև ունի դրօշակի մը անհրաժեշտ բոլոր գոյները: Այսպէս երեք գոյնով բարկութիւններ կան. կապոյտ, ճերմակ և կարմիր: Դեռ ուրիշ գոյնով բարկութիւններ ալ կան, զորս կը նկարագրէ Տանթէ, և ժողովուրդն ու հէքեաթները կը ներկայացնեն պատկերաւոր բացատրութիւններով: Բայց մենք պիտի խօսինք զլիսաւորներուն մասին. —

Կապոյտ բարկութիւն. — Կը կարծուի թէ այս գոյն բարկութիւնը յայտարար է սիֆիլիսի ժառանգական վարակումին: Ուստի բժիշկները ընդհանրապէս, առանց նկատի առնելու թէ վասէրմանը ժխտական է, կապոյտ բարկութեան ներկայացուցիչները կը դարմանեն սիֆիլիսի դեղերով: Երբ տղայ մը կը տապալակի տախտակամածին վրայ, կը ճչայ ու կը հեայ, շնչահեղձութեան վախեր կուտայ, կը նշանակէ թէ երակներուն սրկումին պատճառաւ, արիւնը չի քալեր: Ոտքին ծայրերը, ձեռքին մատները, քիթը կը կապուտնան, որովհետև բնածխական թթուով յաղեցած արիւնը կը կենայ ծայրամասի այդ երակներուն մէջ:

Սպիտակ բարկութիւն. — Այդ գոյն բարկութեան ենթակաները նկուն, ընկճուած անձեր են, ջղասպառներ: Պատճառը ընդհանուր տկարութիւնն է: Արիւնը շուտով կը քաշուի դէպի խորերը: Ուստի ճերմակ բարկութենէ վարակուածներուն պէտք է տալ զօրացուցիչներ, մասնաւորաբար դեղձերու և դործարաններու հիւթեր: Ժողովուրդը այս բարկացողներուն երեսին վրայ կը սրսկէ պաղ ջուր: Ընդհակառակը, պէտք է դադը ջուրի լողանք ընել, և ամառը արևի լողանք և երկաթ պարունակող ջերմուկները զրկել:

Կարմիր բարկութիւն. — Այն արիւնոտ անձերը, որ կակաչի պէս կը կարմրին՝ երբ բարկանան, իրապէս կ'արժեն պաղ ջուրի լողանք մը: Ընդհանրապէս կարճահասակ են և լայն ու կարճ վիզ մը ունին: Անոնք պէտք ունին մարսողական դեղերու, նոյնպէս լեարդը աշխատեցնելու: Լաւ է որ ծովի լողանք ընեն, պաղ տուշ առնեն, նոյնպէս վալերեան եւ ուրիշ ջղհանգստացուցիչ դեղեր:

Այս գոյնգոյն բարկութիւնները, երբ սկսին արտայայտուիլ 9—14 տարեկանին, յիշեցէք թէ պատանիները արբունքի շրջանին մէջ կը գտնուին, իրենց ամբողջ մարմինը յեղափոխութեան մէջ է: Հետեւաբար անոնց հետ բրտօրէն մի վարուիք իբրեւ թէ փոխելու համար անոնց նկարագիրը, այլ հաստատամտութեամբ և քաղցրութեամբ խնամեցէք անոնց բարկութիւնները իբրեւ հիւանդութիւն:

ՏՔԹ. ՎԱՆ ՏԵՐ ԷԼՍԹ